## 21. ԹԱԿԱՎՐՈՒ ԼԱՃ ԻՆԱՆ ԴԸՎՐԵՇ

Թակավրու մեկուն տղա չկեր: Էդա մարթ շատ մառախ կաներ ուր տղա չունենալու վերեն:

Օրին մեկ խետ ուր վազիր վյուրքյըլին սար կնաց ավի, քիչմ ըղտեխ, էնտեխ փոալուց վերճ. թակավոր նեղացավ, պառկավ ծառի խով, քնավ:

Մեկ էլ ակխավ, տեսավ ի՞նչ, ո՛չ վազիր, ո՛չ վյուրքյըլը, թողեր ին ճըմեն էլ գնըցեր ին:

- Հե՜յ, աստվա՛ծ, - ասաց թակավոր, - ի՞նչ կէլներ, որ զի տղեմ տիր: Թե որ զի տղա էլներ, մկա էն խետ իմ կշտին կըյնուկ կէլներ:

Խըրըր մեջ պենին, էնտեխեն դավրեշմ էրևաց, էկավ թակավրու մոտ ասաց.

- Պըրն քյե, թակավոր ապրած: -

- Աստծու պըրին:

- Թակավոր ապրած, ընչի՞ կմտածես:

Ասաց. - Տյու ի՞նչ կիտես, թե ես կմտածեմ:

- Ես կիտեմ, որ տյու կմտածես, ճամ քո մտածմունքն էլ, քո անվորթի էլնելու վերեն ի:

Թակավոր ասաց. - Շատ ճիշտ ասիր:

Էն գյըխ դըվրեշ իխան մեյ խատ ճլպլտուն խնձեորմ իտու, ասաց. - Էսա խնձեորի կեսն տյու կե, կես՝ քո կնիկ, կոռճերն էլ տու քո ծիյուն: Քո կնիկ թե լաճ իպե՝ զի, թե ախչիկ իպե՝ քյե:

Թակավոր ուրախ-ուրախ առեց խնձեոր, տարավ տուն, կոռճերն՝ ծիյուն իտուր, միսի կես ինք կերավ, կես՝ կնիկ: Ինն ամիս, ինն օրից ետ կնիկ ջըմուկ ծնավ, մեկ լաճ, մեկ ախչիկ:

Թակավորու ծին էլ ժամանայ լրանալուն՝ քուռայմ իպե:

Մնաց, տղեյներ ճեռճացան, կնըցին վըրժըտուն, էլըն չուր տաս-տասնըխինգյ տարեկան:

Մեկ օր, քյեոր վ՛ախպեր մեջ ուրենց բախչին խաղցած ժամանայ, դըվրեշմ էկավ սիլեմ իտու ինոնց իրիսի մեջ:

Տղեյներ լըլով կնըցին ուրենց խոր. մոր ասին, թե՝ դըվրեշմ մե սիլը իզըր:

Թակավոր ասաց. - Բըլըմ, թե վըղն էլ կզըննի, ասեքյ՝ ընչի՞ կզըննես:

Էն մեկէլ օր տղեյներ էլմ կնըցին բըխչեն խաղալու, դըվրեշն էլմ էկավ, սիլեմ ինոր, սիլեմ ինոր իրեսին իտուր:

Լաճն ասաց. - Ընչի՞ կզանես. մեն քյե ի՞նչ ենքյ արե:

Դա̈վրեշն ասաց. - Կնացեքյ ծեր խորն ասեք. դավրեշն կասի՝ մեր պայման ընա̈՞ էր:

Տղեյներ կնա̈ցին տուն, դավրեշի ասածն խորն ասին:

Էն մեկէլ օր թակավոր խե տղեյներաց էլավ գնաց բաղչեն ֆռալ. դա̈վրեշն էրևաց, ասաց. - Թակավո՛ր, տյու քյո թակավորական խոսք ընա՞ կպռնես. չէ՞ մենքյ ասինքյ լաճ էլնի՝ տաս զի. ախչիկ էլնի՝ մնա քյե:

- Է՛, դա̈վրեշ բաբա. - ասաց թակավոր. - իսկի խեր կանա՞ ուր ծեռնով ուր տղեն խանե տյուս, տա ուրիշին, տանի: Աման, քանի որ խոսք տվեր եմ, կնա̈ էնա բեռդ ծառի մեջ պախկվի, ես իմ ալնախ կթա̈լեմ էնոր ճղերաց վերեն, իմ լաճ կեռրեռխկեմ, որ գյա̈ պիրի, տյու պռնի, առ տար:

Դա̈րվիշ ուրախացավ:

Թակավոր ուր ալնախ իթա̈լ վեր ծառի ճղերաց, առեց ուր տղեյներ կնա̈ց տուն:

Էն որ կնա̈ց տուն, դա̈վրեշ գնա̈ց, մտավ ծառի բեռդի մեջ:

Տուն որ խասավ, թակավորն ուր լաճուն ասաց. - Տղա՛, իմ ալնախ մոռցա վեր ծառի ճղին, գնա̈ պե:

Լաճն ասաց. - Քյո՛ ծին տու. խեծնիմ էրթա̈մ պիրեմ, թե չէ՝ չեմ էրթա̈:

Թակավոր ծին իտուր ինոր. լաճն ի խեծավ ծին, կնա̈ց ալնախ պիրելու:

Որ բաղչին մոտխասցան, աստծու խրամանքով ծին էլա̈վ լեզյու, ասաց. - Տղա՛. թակավոր քյե էորեռխկեց մոտ դա̈վրեշ. որ դա̈վրեշ քյե պռնի տանի: Էն ալնախ մախսուս իթող վեր ծառին: Որ զի լսես. կանաս քյե ազատե: Եփ ծառին կմոտանուսնքյ. ես կփռշտամ, ալնախ կքա̈շեմ տեխ զի, տյու ճաման առ ալնախ, թռի էսա պատից էն իրես, քյե թա̈լ մեջ սև խերկին: Դա̈վրեշներ չեն կանա մտնի խերկի մեջ:

Աման էնգյա̈խ, որ տյու կթռնես, դա̈վրեշ կտա̈ռնա վեր զի, թե կարցա զի ազա̈տել՝ աղեկ, թե չէ՝ էն զի կսպանի, աման աստված սիրես, իմ լեշ չթռնես խողի իրես, թաղի, նոր թո կնա:

Տղեն մտավ բախչի մեջ թե չէ՝ ծին փռնքտաց. ալնախ ծառի վիրվից թռուց ճավի մեչեն իպե: Լսեն ի, ճաման թռավ ծիյու վիրվից, ալնախ պռնեց, ուրն իթա̈լ պատի էն մեկէլ իրես, սև խերկի մեջ:

Էն կտոր գյա̈խ դա̈վրեշ ծառի բեռդի մեչեն էլավ տյուս. տեսավ. որ տղին չկարցավ պա̈մ աներ. մեյ գյոմփ խասուց ծիյուն. ծին տեղնստեղ փռեց գյետին:

Տա̈րցավ տղին, ասաց. - Տղա՛, տյուս արե էդա սև խերկի մեչեն, քյանի վեր քյե չեմ պարկացե:

- Չէ՛, - ասաց տղեն, - ես տյուս չեմ իգա̈, տյու ինչ կանես, արա:

Դա̈վրեշ տեսավ. որ տղեն տյուս չի գյա̈. կայնավ, կայնավ, թողեց կնա̈ց:

Տղեն էլա̈վ տյուս, ուր թրով գյետին փորեց. ծին թա̈ղեց էնտեղ, թողեց կնա̈ց:

Շատ կնա̈ց. քիչ կնա̈ց, կնա̈ց տեսավ, որ սարիմ գյլեոխ ծուխ կէլնի, մուխ կէլնի: Մոտխասցավ սարին. տեսավ սարի գյլեոխ ժողովուրթ թա̈փե. կայնե շիվարած կիրիշկա:

Տղեն ի կխարցուցի, կասի. - Ընչի՞ եքյ թա̈փե էսա տեղ, շիվարեր եքյ, կայներ եքյ, կիրիշկեքյ:

Մարթեր կասեն. - Էսա սա̈րի էն իրես մեկ շեր կա, որ իսկի մսարթու չթռնե ընցնի: Իկեր ինքյ ժողվոտվեր էսա տեղ, կվա̈խենուսնքյ մոտանանքյ. վով ընցնի՝ կպռնի կուտի:

Տղեն ուր նետ վանեղ կթալի թև. կէրթա. էնկյնտյար մարթեր կպռնեն. կսեն.
- Մ'երթա. քյե էլ կուտի:

- Չէ՛. - կասի. - ես կէրթամ. թո զի ուտի:

Տղեն կինի ճամբուխ. կխասնի չուր էն շերի պեռն: Ծերն ի կխասնի տեխ էսա տղեն, տղեն նետ վյնեղմ կզյնի: Զանելուն պես, շեր կփովցուցի զյետին:

Սորա կէլնի տարի գյլեոխ. ծեռնով կանի ժողովուրթին. կկանչի:

Ժողովուրթն ի կուգյն. կթյփի, մարթեր կտեսնան, որ ի՞նչ, շերն ինգի էնտեղ. սատկե. ինոր էրու ծյքերն էլ գյե ուր պեռնի մեչ:

Կինեն տղի ոտաց վերեն, շնորհակալ կէլնին, կասին, - Ուզի՛. քո ուզած տանքյ:

Տղեն կասի. - Ես ծեզնից ուրիշ պան չեմ ուզե. զի քյառսուն օրվա խաց, քյառսուն օրվա ճյուր տվեքյ, ես էսա շերի ծյքյեր շախեմ, պախեմ:

Հմեն մարթ կվյզի. խաց. միս. եղ, ուտելիք կպերի, քյառսուն չէ, խարիր քյառսուն օրվան էլ կէլնի:

Դեռրիս հմեն մարթ էդա ճյմփով կէրթեր կուգյեր:

Տղեն ի. կառնի էդա խաց, ճյուր, քյառսուն օր շերի ծյքեր կշախի. կպախի, քյառսուն օրից ետ կառնի խետ. կէրթյ. ինքյ դեռ՞ր էրթեր. շերի ծաքյերն էլ էնտեղ. ինոր իդիվից կէրթին:

Տղեն կառնի իտռնքյ. կինի ճամբախ: Ծատ կէրթյ, քիչ կէրթյ. կխասնի դյվրեշի երկիր: Կէրթյ դողրի դյվրեշի տուն կթփի: Աման ինքյ չէր կիտե թե վի՞ր տուն էր, վի՞ր չէր:

Դյվրեշի մեր էկավ դուր իպյնց:

Տղեն սսաց. - Պարև՛ քյե, մամիկ:

Մամիկն ասաց. - Աստծու պյրին:

Ասաց. - Մսաֆեր կուզե՞ս:

Ասաց. - Ընչի՞ չէ:

Տղեն կննց մտավ ներս: Դյվրեշ տղին տեսավ, շատ ուրախցավ, աման որ շերի ծյքյեր տեսավ, ասաց. - Խոնքյ պյն ավիրիցին:

Տղեն կննց ներս, մամիկ խաց իպե, կերավ, խանգստացավ: Տղեն դյվրեշին չտեսավ իսկի:

Դյվրեշն էլյվ կննց տյուս, գյխտիկ ուրենց էօդի մեչ քյառսուն գյզյնոց խորմ փորեց, հյզրեց, որ տղին իսկի մեչ:

Սորա որ իրիկուն էլյվ, մորն ասաց. - Մարե՛, էդա տղի տեղ վեր էն խորի պեճին կեսկես, որ ես ինոր քյշեմ մեչ խորին: Որ իմ խյբյր չանես, քյե կսպանեմ:

Մարն իպե խորին պեճի վերեն էրկու խատ էյրեթի փետ իթյլ. տղի տեղ վըր ինոր շինեց:

Իրիկուն ի, տղեն խալավ իխան, պառկավ, ուր էրկու ծյքյերն էլ գյեռ ինոր տեղ մեկ՝ աչ կող, մեկ՝ ծախ կող նստուկ ին:

Դավրեշ խորի մեչեն ծեռ ի թյլ, որ տղին քյաշեր տակ, համան ծյքյեր ուրենց տղին պռնեցին, քյաշեցին վեր. մեյ գյոմփ մեչ դյվրեշի գյլխուն կլորեցին մեչ խորին:

Դյվրեշն էր՝ պերան կոտրվավ, էլյվ կննց ուր փոռքյ թյփեց վեր մոր, մոր տփից, թե տյու ընչի ըսկում չարիր, որ ես շոտմ ինոր քյաշի ցածր:

Ինչ որ է, էն մեկէլ օր դյվրեշ մորն ասաց. - Մարե՛, էսօր տղին ասա, թող շերի ծյքյեր կապի զնջըլով մեր էրկաթե տան մեչ, քիչմ խաց. ուտելիքյ տու. թո պիրի տյշդ զի խամար:

Էն մեկէլ օր, կեսավուր տեխ պառավն ասաց. - Բալա՛, էլի էսա խաց կերակուր տար իմ տղին, իմ տղեն տաշղ կպանի, աման քյո ծուքյեր խետ մի տանել, էլնի իմ տղեն վճխենա: Ծաքյեր թո տուն, մենակ թե պե կապի զնշըլով, որ զիկ էլ պճմ չանեն:

Տղեն կավատա, ապա ի՞նչ կիտի, ինչ ի՞, ի՞նչ կիտի դճվրեշի մերն ի էդա այստավ:

Տղեն կպիրի ուր ծեռնով շերի ծճքյեր կկապե դճմյուրե տան մեչ զնշըլով, կառնի խաց, կերակուր, կէրթճ տճշղ:

Կխասնի տեղմ, էնտեղ իրեքյ խատ խնձեռրի ծառ կեր, կկայնի ինոնց խովի տակ, քիչմ խւսնգյստանալու, կտեսնա, որ մարթըմ էն տեխեն էկավ. կիրիշկա, որ դճվրեշն ի:

Դճվրեշ որ կմոտանա, կասի. - Մըկա ի՞նչխ կպրծնես իմ ծեռնեն, - կասի, կխասնի տեխ տղեն: Տղեն ի ծեռաց պուտկով կերակուր տուռ-տաք կթփի դճվրեշի քյիթ մոթի մեչ, ինքյ կթռնի էն մեյ խնձեռրի ծառի վերեն:

Դճվրեշն ի չուր քյիթ մռութ կսրպի, աչկեր կպճնու, կտեսնա տղեն գյեռ ծառի վեր:

Կասի. - Տղա՛, էճի տակ, թե չէ՝ էսա ծառ կկտրեմ, ափսոս ի, խորոտ ծառմ ի:

- Չե՛մ էճնի, ի՞նչ կուզես էն արա:

Դճվրեշ պսղթեն կառնի ծեռ, մեյ խատ կզճնի ծառի քյեռքյին, ծառ քյեռքյմանց կիսկի էնտեղ:

Ծառ ռճլճ չինգյճծ, տղեն ուր կթճլի վեր էն մեկէլ ծառին:

- Տղա՛, քյե կասիմ արե տակ, ափսոս են էսա ծառեր:

Տղեն էլըմ չլսե:

Դճվրեշ մեյ պճլթից էնէլ կպառկցուցի գյետին:

Տղեն ուր կթճլի էն մեկէլ ծառի վերեն:

Դճվրեշ կասի. - Էճի տակ, էսա մեյն ի մնացե, էս էլ որ կտրեմ, էլ դեռ՞ր կթռնես, ավելի աղեկ չի՞, որ էճնես տակ, էսա ծառին զճրճր չի տաս:

Տղեն ի կասի. - Դճվրե՛շ, էն որ տյու քյո արած պիտի անես, աստվածդ որ կսիրես, կայնի ես մեյ խատ իմ փող փչեմ, իմ խավաս խանեմ, նոր կէճնեմ տակ, էն գյճխ ինչ կիտես արա:

Տղեն ի, ուր փող մեչքից կխանի տյուս, կփչի: Փչելուն պես աստծու խրամանքյով փողի ծեն կխասնի չում դճվրեշի տուն: Շերի ծճքյերն են ուրենց զինշիլ ի, կապ ի, դճմյուրե տյոտ ի, ռըմեն կպրտեն, կկտոտեն, կքյակեն-կավիրեն, աչկոխփոց գյճխ կխասնեն տղի մոտ, կպռնեն դճվրեշին, աղեյմ տըփոց կուտան:

Տղեն կխասկնա թե էնտեղ, որ կապրի, դճվրեշի տուն ի, աման չէրթճ էն տնից:

Էն մեկէլ օր դճվրեշ մոր կսովրցուցի, կասի. - Ասա՛, թո էրթճ ճյուր պիրել, ռամման տյու ինոր փող մոտից առ կապի սան, չուր ես գյճմ:

Մերն ի, էն մեկէլ օր կասի. - Տղա՛, արե քյե ծճքյեր կապի, կնճ ճյուր պիրել, էսօր լվաց կանեմ:

Տղեն կպերի ծճքյեր կկապի, կառնի կժեր, որ էրթճ ճյուր պիրել, պառավն ի կխասնի մեչքից փող կքյճշի, տղին կտանի կկապի սուն, կառնի կժեր, որ էրթճ ճյուր պիրել:

Ճյուր կպերի, կլցի պղնձներ, կիփի, կեռցուցի:

Սորա կասի. - Դե՛, արե խաղավ խան, մտի մեչ էսա ճրին:

Տղեն կասի. - Աղեկ, մամի՛կ. մեյ խատ ալնի ճյուր աչկի, նոր:

Պառավն ի, որ կկզվի, ալնի ճյուր խասկնալու, համան տղեն իտիվանց շոտ կուտա մեչ պղնձին եոման ճյրին: Պառավ էն տեղ կխաշվի, կիփվի: Ինք կառնի շերի ծմքյեր. կէրթմ:

Քիչ վերճ դմվրեշն ի կուգյա տուն, կտեսնա, որ պղինձ վեր թորվուն, մայրըմ էլ գյեռ մեչ:

- Օխե՜շ. - կասի ինքն ուր, - կէրա տղի միս, մարե՛, մարե՛:

Մարեն ձեն չի տա:

Դմվրեշ կասի. - Չայեր կնացե տակցի տուն, ես ուտեմ չուր էն գյա:

Քիչմ կուտի, չուտի, կխասնի չում ծծեր, կտեսնա, որ ծիծ կա, նոր կխասկնա, թե ուր մերն էլ գնաց ծեռնեն: Աման էլ ի՞նչ կաներ անե:

Տղեն առեց ուր ծմքյեր, ինգյմվ սար քար: Շատ կննց. քիչ կննց, խասավ մեկ մեշիմ մեչ, տեսավ մեկ ալաճմ:

Մոտացավ ալաճին, ասաց. - Է՜յ, ալա՛ն, էսա քանի օր ի մենքյ մնացեր ինքյ անոթի, չէլնի՞ որ մե քիչմ ծիծ տաս, չում մենքյ վոժովնունքյ, նոր էլնենքյ էրթմնքյ:

Ալան կասի. - Խա՛, էկեքյ ծիծ տամ, ի՞նչ կէլնի:

Տղեն ուր ծմքյերով կէրթմն ինոր պոն: Ալան ինոնց օրեն իրեքյ տիր կաթ կուտեր. ծիծ կուտեր, կէրթեր սար:

Էդա ալաճին էլ էրկու ծմքյ կեր:

Տղեն հմեն օր էդա ծմքյերաց կթփեր, որ խնվնղնին. կաթ չուտին: Քյմնիմ շմպմթ կընցնի:

Օրմ ալան կտեսնա, որ ուր ծմքյեր էրթմլով կպմրմյնուն, պսյ կդնի խենքյ ի՞նչ կանի էսա իսանօղլին:

Ալան կտեսնա, որ իսանօղլին ուր էրթմլուց վերճ կէլնի ուր ծմքյերաց կքյմշի փետ, աղեյմ կտփի:

Ալան կմտնի ներս, կասի. - Իսանօղլի՛, առ քյո շերի ծմքյեր, էսա տեղեն կնմ, էլ չեմ ուզի մնմքյ իմ պեռն: Հա՛մ իմ կաթ կուտեքյ, հա՛մ իմ ծմքյեր կտփեք:

Տղեն կասի. - Է՛, ըտսնմ մա՛սի, ասա՝ իմ կաթ ծե խալալ էլնի, որ էրթմնքյ:

Ալան կասի. - Իմ կաթ ծե խալալ, կնա՛ցեքյ իմ տնեն:

Տղեն կառնի ուր էրկու ծմքյեր, կինի ճմմբմխ: Կուգյմ տեխ ուր խոր երկիր: Շատ կուգյմ, քիչ կուգյմ, կխասնի ուր խոր քյաղքյի մոտ, կտեսնա, որ անթիվ անխըսմբ մսքյմր. յոթ թակավրու մսքյմր իկեր են ժողվուտվեր են վեր ուր խոր քյաղքին:

Իսորից, ինորից կխարցուցի, կխասկնա, որ էտա յոթ թակավոր իկեր են, ուր խոր վերեն, որ ուր քեոր տանեն էն մեկ թակավրու լաճուն:

Էդա որ կլսի տղեն, կաչկի չում իրիկուն. իրիկուն ի, կառնի ուր ծմքյեր, կքյմշի ուր թուր, կինի մեչ ասքյրին, կպրտի որ կպրտի: Շերի ծաքյերն են կտրորեն, որ կտրորեն, կսպանեն որ կսպանեն, չում առատուն խատ չեն թոնե:

Տղի խեր, որ ուր մսքյըրներ հմեն էդա կովու մեչ փճցուց էր, էն առատուն էլմվ վեր, հմգրվավ, որ տաներ ուր ախչիկ տեր կոհիվ սրող թակավրու լաճուն:

Մեկեն խմբմր պիրին, ասին. - Թակավոր ապրած, էլ ասքյար-մասքյմր չկա էն տեղեր: Արուն գետի պես կէրթմ, մենակ զատ տեղ մեյ չմդր կա զմրկուկ:

Թակավոր էլմվ իրիշկաց, տեսավ, որ ըսկուն ի, ինոնց ասածի պեսն ի:

Էլմվ կննց տեխ էդա չմդրն, ասաց. - Կա, չկա՝ էս մարթն ի պրտե էսա ասքյար:

Թակավոր խասավ չադրի մոտ, տղեն էլավ տյուս: Տղեն ճանչցավ ուր խոր, աման խեր չճանչցավ ուր տղին:

Խերն ասաց. - Կտրի՛ճ. տյու ի՞ր կոտորեցիր էսա իմ ղյուշման:

Տղեն կասի. - Խա՛. թակավոր ապրած:

- Է՜, - կասի թակավոր. - իմ ախչիկ քյե խալալ էլնի, քյանի որ տյու ազատեցիր, քյե կխասնի:

Տղեն կասի. - Տյու որ քյո ախչիկ տաս. ես ի՞նչ կանամ ասե՝ կառնեմ: Կպերի տուն տղին, թակավոր կկանչի ուր վազիր-վյուքյալեն. նշանց կուտա տղին. կասի. - Էսա տղեն իմ ախչիկ ազատեց. իմ աղչիկ պիտի տամ իսոր:

- Ծատ աղեկ կէլնի, - ասին, - ինորից ա̈վելի աղեկ մարթու՞ պիտի տաս:

Պիրին յոթն օր, յոթ կիշեր խար-խարսնիս արին, տղին փսակեցին խետ ախչկան:

Էն կիշեր, որ տարան մեյտեղ, տղեն քյա̈շեց ուր թուր:

Ասաց. - Ախչի՛կ. կիտես. ես էրդյում եմ արե, որ իմ փսայվելու առճին օր. պիտի զատ մնամ իմ կնգա̈ն մոտեն, - կասի, թուր կտնի մեչ էրկուս. կպառկի: Քյեոր ախպեր մեչ մեյ յաթղի կքյնեն:

Քիչմ վերչ ախչիյ կակխի. կէլնի ուր մա̈ռա̈խ լաճու էսա արած. կէլնի լաճու ծոց շեբ կխառնի. կասի՝ խենքյ ի՞նչ կա, ի՞նչ չկա ինոր ջեռբ. խենքյ կանա՞ խասկնա վի՞ր տղեն ի, վիր տղեն չի:

Ջեռբ, ծեռ, ծոց որ կխառնի, խոր ալնախ որ ծառի վերվից առեր էր. կխանի տյուս:

Ախչիկ կճանչնա, թե տղեն ուր ախպերն էր:

Հա̈մա̈ն կվազի խոր մոտ իմաց կուտա:

Խեր, մեր կուզյա̈ն տղին կակխցուցին, կինին շլինքյով:

Տղեն ի. ուր գյլխուն գյա̈լած ճմեն խոր մոտ կպատմի:

Կընցնի քյա̈նիմ օր, տղեն կասի. - Թակավոր ապրած, էսա մեր կող կշտի էրկրներաց ո՞ր թակավրու աղչիկ շատ խորոտ ի:

Խեր կասի Արաբստանա թակավրու ախչիկ:

Տղեն կէլնի ուր խամար տաս կղրա̈նոց մեյ թուրմ կշինի, կխեծնի ծին, ուր շերի ծա̈քյեր խետ ուր կէրթա̈:

Ծատ կէրթա̈. քիչ կէրթա̈, կէրթա̈ կխասնի Արբստանա թակավրու քյաղաքյ:

Կէրթա̈ դողրի թակավրու մոտ:

Կասի. - Պա՛րև քյե. թակավոր, քյո ախչիկ պիտի տաս զի:

- Ծո ի՞նչ կասե. ճայդե՛, էլի կուրիսի իմ տնից:

- Է՜, թակավոր, - կասի տղեն, - կովով պամ չի՞, վաղ խան տյուս քյո ա̈սքյրներ, կովենքյ. թե ճա̈ղթվար՝ քյո ախչիյ կտանեմ, թե չէ՝ իմ վիզ քյե խալալ ի:

Էն մեկել օր Արաբստանա թակավոր ուր ա̈սքյրներ էլավ տաշղ: Իրիշկաց տղի չա̈դր տեսավ. աման ա̈սքյար-մա̈սքյա̈ր չկա, պա̈ն չտեսավ:

Էղա̈վ մարթ էորեոխկեց, ասաց. - Ու՞ր է քյո ա̈սքյրներ, ինչո՞վ պիտի կռիվ անես:

Տղեն ասաց. - Իմ ա̈սքյրներ էսա էրկու շերի ծա̈քյերն են:

Թակավրու մարթեր կնա̈ցին ասին. - Թակավոր ապրած. ա̈սքյար չունի. կասի իմ ա̈սքյրներ իմ էրկու շերի ծա̈քյերն են:

- Հե՜յ, - ասաց թակավոր, - քսան-եռսուն մարթ էորեոխկեքյ, թող սպանեն տառնան:

Էկան էն քսան-եոսուն մարթ. աման տղեն մեյ մկին մեյ թուր իթսալ, ըմենին էլ սպանեց իտիր էնտեղ:

Արաբստնա թակավոր տեսավ. որ չէ՝ ուր ասածի պես չի, ըրաման արաց. ա̈սքյրներ ըմեն կնա̈ցին:

Տղեն ուր շերի ծա̈քյերով թուր քյա̈շեց ինգյա̈վ ինոնց մեչ, ա̈սքյար չթողին. ըմենին էլ սպանեցին, կոտորեցին:

Թակավոր փախավ, կնա̈ց մտավ ուր տուն:

Տղեն ինգյա̈վ ինոր իտև. կնա̈ց մտավ էնոր էօղեն:

Թակավոր որ տեսավ տղին, ասաց. - Ես քյե մեղա, կուտամ իմ ախչիկ քյե, ես էլ կուգյա̈մ, քյե կէլնեմ ծառա:

Տղեն ասաց. - Է՛, ա̈նխելք մարթ, որ առաչվնե առանց արուն թափելու տեր ա̈վելի աղեկ չէ՞ր էլնե:

Կառնի տղեն Արաբստանա թակավրու ախչիյն, ինան խեր, կուգյա̈ ուր խոր քյաղաքյ:

Էնտեղ յոթն օր, յոթ կիշեր նոր խարկ-խարսնես կանի թակավոր, տղեն կփսակի, նոր ինոնքյ կխասնեն ուրենց մուրազին, տյուք էլ՝ ծեր:

